ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ պայմանագրում 2018 թվականի մարտի 15-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Քանի որ հեղինակային հսկողության ծառայությունը կապված է շինարարության ընթացքի հետ, նպատակահարմար է յուրաքանչյուր տարի շինարարական ծրագրի համար գումար հատկացնելու դեպքում կնքել նոր պայմանագիր:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում	2018 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.02.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ գնման պայմանագրի

ք. Երևան 15 մարտի 2018թ.

<< ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 21.02.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/1 Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Սույն պայմանագրի Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 935 500 (ինը հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012524 ՀՎՀՀ 02565827	<<Հայնախագիծ>> ԲԲԸ ք. Երևան, Չարենցի 1 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2470100038500000 ՀՎՀՀ 01503291
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Գ. Ազիզյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.